

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՅԱՆՔ

ԲԱՂԴԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ

Մայիսի 11-ին տեղի է ունեցել Բաղդատի Նորաշեն թաղամասի ս. Կարապետ նորակառույց եկեղեցու օծումը՝ ձեռամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանի:

Բաղդատի նորակառույց ս. Կարապետ եկեղեցին

Ս. Կարապետ եկեղեցին կառուցվել է բարեպաշտուհի տկն. Ռեժինա Կարապետ Իսկենտերի նվիրատվությամբ և պրն. Աբրահամ Շահինյանի անմիջական հսկողության ներքո: Նորակառույց եկեղեցին կոչվել է ս. Կարապետ՝ ի հիշատակ բարերարուհու հանգուցյալ հոր՝ Կարապետի:

Օծման արարողությանը և նույն օրը մատուցված ս. պատարագին ներկա են եղել բազմաթիվ հոգևորականներ քույր եկեղեցիներից, որոնց թվում՝ պապական նվիրակ մոնսենյոր Ժան Ռյուպը, լատին եկեղեցու առաջնորդ մոնսենյոր Էռնեստ Նիարին, սիրիական եկեղեցու առաջնորդ Մուրան Զաքիան, հայ կաթոլիկ եկեղեցու առաջնորդ գերապայծառ Հովհաննես Գասպարյանը, ասորի Ծապաթապահ պատվելին, այլ հոգևորականներ և հայ կաթոլիկ ու լատին քույրեր:

Օծման արարողությունից հետո տ. Ասողիկ եպիսկոպոսը հոգեշունչ քարոզ է խոսել՝ «Երանի եկեղեցի շինողաց» բնաբանով, որից հետո սկսվել է ս. պատարագը:

Ս. պատարագի արարողությունից հետո նորակառույց եկեղեցու մոտ գտնվող հայկական ծերանոցի (այն նույնպես կառուց-

վել է տկն. Ռեժինա Կարապետ Իսկենտերի նվիրատվությամբ) ընդարձակ սրահում տրվել է ճոխ ճաշկերույթ, որին մասնակցել են պատարագի մասնակիցները:

Մայիսի 12-ին, շաբաթ օրը, ս. Կարապետ եկեղեցում ս. պատարագ է մատուցել տ. Զավեն քհն. Փոլադյանը, և տեղի է ունեցել մկրտության ս. ավազանի օծումը՝ ձեռամբ առաջնորդ սրբազանի:

Մայիսի 13-ին, կիրակի օրը, ս. Կարապետ եկեղեցում ս. պատարագ է մատուցել տ. Սեպուհ վրդ. Սարգիսյանը, և տեղի է ունեցել եկեղեցու սրբապատկերների օծման կարգը՝ ձեռամբ տ. Ասողիկ սրբազանի:

Կիրակի օրը, ս. պատարագի արարողությունից հետո, կատարվել է հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ բարերարների տկն. Ռեժինա Կարապետ Իսկենտերի հին և նոր ընջեցյալների:

ԻՍԻ ԼԵ ՄՈՒԼԻՆՈՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Մայիսի 31-ին, Համբարձման տոնի օրը, տեղի է ունեցել Իսի Լե Մուլինոյի հայկական եկեղեցու հիմնարկեքի օրհնությունը: Իսի Լե Մուլինոյը Փարիզի հայաշատ արվարձաններից մեկն է:

Տ. Նորվան վարդապետի գլխավորությամբ անցյալ տարի կազմվել է սույն եկեղեցու շինության հանձնախումբը՝ հիմնականում բաղկացած երիտասարդներից: Հանձնախումբը նվիրումով և երիտասարդական ավյունով կարճ ժամանակի ընթացքում ի կատար է ածել նախապատրաստական բոլոր աշխատանքները:

Եկեղեցու հիմնարկեքի օրհնության օրը խուռներամ բազմություն էր հավաքվել եկեղեցու բակում: Ներկա էին նաև Փարիզի Մայր եկեղեցու վարչության և ներկայացուցչական ժողովների անդամները և ճարտարապետներ պրն. պրն. Ապրո Քանճյանը, Հանրի-Միհրան Քանճյանը և Ժան-Տիրան Հանըմյանը, որոնց հանձնվել էր այդ եկեղեցու շինության գործը:

Ժամը 17-ին ժամանում է Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը՝ շրջապատված Փարիզի և շրջակայքի հայ եկեղեցիների հոգևորականներով:

Սկսվում է հիմնարկեքի օրհնության արարողությունը: Յուրաքանչյուր վեմքարի կընքահայրությունը ստանձնել էր բարեպաշտ մի ազգային:

Նախ լվացվում են վեմքարերը ջրով և գինով, ապա տ. Սերովբե սրբազանն «Առաքելոյ աղաւնոյ»-ի երգեցողությամբ ս. մեռոնով օծում է յուրաքանչյուր վեմքարը: Այնուհետև օրհնում է եկեղեցու չորս անկյունները և առաջին շաղախը զետեղում իր իսկ ձեռքով՝ հիմքի մեջ դնելով հետևյալ հիշատակարանը.

«Յամի Տեառն 1973-ի, յերեսունմեկերորդի աւուր ամսեանն մայիսի, ի տօնի Համբարձմանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ի հայրապետութեանն Տ. Տ. Վազգենի Առաջնոյ Սրբազնագոյն կաթողիկոսին Ամենայն Հայոց եւ ի պատուիրակութեանն տ. Սերովբէ ս. արքեպիսկոպոսին եղան հիմունք եւ օրհնեցան անկիւնաքարք սրբոյ եկեղեցւոյն Իսի Լէ Մուլինոյի որ մերձ առ Փարիզ մայրաքաղաքին Ֆրանսայի,

Ճարտարապետութեամբ եւ վերհսկողութեամբ տիար Ապրօ Քանճեանի եւ որդւոյ նորին Հանրի-Միհրանի եւ օգնականութեամբ պրն. Ժան-Տիրան Հանըմեանի:

Տէր Աստուած հաստատուն արասցէ զհիմունս սորին եւ յաջողութեամբ ի կատար ածցէ ի վայելումն մանկանցն Հայաստանեայցս առաքելական եկեղեցւոյ եւ ի փառս անուան իւրոյ: Ամէն»:

Այս հանդիսավոր արարողությունն ավարտվում է պատվիրակ սրբազան հոր «Պահպանիչ»-ով և միաբերան երգված «Հայր մեր»-ով:

Իսիի եկեղեցին գտնվում է քաղաքի գլխավոր պողոտաներից մեկի վրա, քաղաքի կենտրոնում: Եկեղեցու հետ միասին պետք է կառուցվեն նաև ընդարձակ մի սրահ, դասարաններ՝ հայերեն դասընթացների համար, և հոգևորականի բնակարան՝ իր բոլոր հարմարություններով:

ԼԱ ՍԻՈԹԱՅԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ

Օգոստոսի 15-ին, ս. Աստվածածնի Վերափոխման տոնի օրը, տեղի է ունեցել Լա Սիոթա (Մարսելի մոտ) քաղաքի ս. Կարապետ նորակառույց հայկական եկեղեցու օծումը՝ ձեռամբ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի:

Հայրապետական պատվիրակ սրբազանը նույն օրը ս. Կարապետ մատուռում մատուցել է առաջին հանդիսավոր ս. պատարագը՝ ի ներկայության Մարսելի հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Հակոբ եպս .Վարդանյանի, Մարսելի և շրջակայքի հայ հոգևորականների, Լա Սիոթայի և այլ վայրերի հայության:

Օծման արարողությանը և ս. պատարագին ներկա էին նաև քաղաքապետարանի ներկայացուցիչները, օտար հոգևորականներ և տեղական թերթերի թղթակիցներ, որոնք հաջորդ օրը լրագրերում անդրա-

դարձել են այս արարողությանը՝ լուսանկարներ հրատարակելով հանդերձ:

Հավարտ ս. պատարագի կատարվել է հոգեհանգստյան պաշտոն՝ բոլոր նվիրատուների հիշատակին, և ապա կատարվել է խաղողի ավանդական օրհնությունը:

Նույն օրը, կեսօրին, եկեղեցու վարչության կողմից տրվել է պաշտոնական ճաշկերույթ, ուր խոսք են առել տ. Սերովբե և տ. Հակոբ սրբազանները և Լա Սիոթայի եկեղեցական վարչության ատենապետ պրն. Թովմաս Համամջյանը:

Սույն ճաշկերույթին ներկա են եղել նաև Մարսելի Մայր եկեղեցու վարչության ատենապետ պրն. Արծրուն Զրբաշյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ, որոնք և այս առիթով կարևոր նվիրատվություն են կատարել նորաաշ ս. Կարապետ եկեղեցուն:

*
* *

Արևմտյան Եվրոպայի հայոց հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի կարգադրությամբ վերջերս Շվեյցարիայի և Ժնևի հայոց հոգևոր հովիվ է նշանակվել տ. Դավիթ ծ. վրդ. Սահակյանը, «որը տասը տարիներե ի վեր կրոնավորի նվիրումով և գիտակցությամբ պաշտոնավարել է» Լիոնի հայոց համայնքի ծոցում:

Հայրապետական պատվիրակի կարգադրությամբ Լիոնի հայ համայնքի համար հոգևոր հովիվ է նշանակվել Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի միաբան տ. Գեղամ ծ. վրդ. Զաքարյանը, որը «գիտակից և լուրջ հոգևորական մըն է և ութը տարի Կալկաթա հովվական և ուսուցչական փորձառություն ալ ունի»: Իսկ Մայր Աթոռի միաբան տ. Տարոն վրդ. Ճերեճյանը, որը նախապես հոգևոր հովիվն էր Մարսելի արվարձաններից մեկի ս. Կարապետ եկեղեցու, այժմ հոգևոր հովիվ է նշանակված Նիցցայի և շրջակայքի հայ համայնքի:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընտիր հոգևոր հովիվներ տ. Դավիթ ծ. վրդ. Սահակյանին և տ. Գեղամ ծ. վրդ. Զաքարյանին ու նրանց բարեմաղթում եկեղեցանվեր բեղուն գործունեություն՝ ի մխիթարություն իրենց համայնքների հայ հավատացյալ ժողովրդի:

ԲՈՂՈՔ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ

Զվիցերիո հայոց եկեղեցական խորհուրդը Մայր Աթոռեն ստացավ պատճենը 18 հունիս 1973 թվակիր իր հայտարարության, ուր վեր կառնե Անթիլիասի Խորեն կաթողիկոսի նոր մեկ անօրինությունը և կոչ կընե մեր սուրբ եկեղեցվո սպասավորներուն ու ժողովուրդին մերժել հիշյալին սուրբ Ներսես Շնորհալիի մահվան ութհարյուրամյակին նվիրված «Կոնդակը», ուր ան ինքզինքին համար գործածեր է «Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսը և զայն ուղարկեր իր թեմեն դուրս գաղութներու ևս, անօրինաբար:

Խորհուրդս, հանուն զվիցերիահայ գաղութին, իր ներկա հայտարարությամբ ոչ միայն կմերժե նման հանդգնության մը հեղինակին արարքը, այլ նաև պատմության համար կավելցնե հետևյալները:

1—Անթիլիասի Աթոռին—մոռնալով Սուրբ Աթոռին ավանդական և ազգովին ընդունված դիրքն ու հանգամանքը—իր առաքելության հունեն ու բնույթեն դուրս ելած օրեն սկսյալ, հայ ժողովուրդը, հայրենի և սփյուռքահայ իր զանգվածին ջախջախիչ մեծամասնությամբ, իր սրտեն սրբած ու դուրս է նետած զայն:

2—Մեր ժողովուրդը Մայր Աթոռի գերագույն հեղինակության ի հարգանս հոգեկան զսպված ճնշումով լուռ հետևեցավ ցարդ, Անթիլիասի Աթոռին հարաճուն շահատակություններուն նկատմամբ Հայոց Հայրապետին ծայրաստիճան հաշտարար ու հանդուրժող ընթացքին, քաջ գիտնալով թե գերազնիվ կեցվածքով ցույց տրված հաշտարար ոգին և հայրապետական ներողամտությունը անօրեններու կողմե պիտի շահագործվեին միայն:

3—Խորհուրդս Մայր Աթոռի ներկա կոչը իրեն տրված ազատություն մը կնկատե, որպես մեր ժողովուրդին մեկ մասնիկը, արտահայտելու համար իր ցասումն ու ընդվզումը հիշյալ Աթոռի անունով ցարդ կատարված անօրինություններուն դեմ, որոնք անկասկած պիտի դատապարտվին մեր պատմության կողմե, և կխնդրե Հայոց Հայրապետեն ու Մայր Աթոռեն եպիսկոպոսական ժողովի մը միջոցավ ազգային-եկեղեցական պախարակումի ենթարկել հիշյալ Աթոռի վերջին անօրեն աթոռակալները և անոնց գործակցող բոլոր եպիսկոպոսները:

ԶՎԻՑԵՐԻՈ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ժնև

ԲԵՅՐՈՒԹԻ՝ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 15-ԱՄՅԱԿԸ

Տասնհինգ տարի առաջ Բեյրութում կազմակերպվեց տեղի հայ Էջմիածնասեր բա-

ռեպաշտ հայրենասեր տիկնանց միությունը: Սույն համախմբումի եկեղեցանվեր և ազգօգուտ գործունեության 15-ամյա հոբելյանի առթիվ ս/թ. հունիսի 3-ին Բեյրութի «Ալիազար» պանդոկում տեղի ունեցավ մի հետաքրքիր ճաշկերույթ՝ նախագահությամբ տեր և տիկին Հայկազուն Թորոսյանների:

Պատվո սեղանի շուրջ տեղեր էին գրավել օրվա նախագահը և տիկ. Հայկուհի Թորոսյանը, Մայր Աթոռ ս. Էջմիածնի միաբաններ տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը և տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը, ատենապետուհի տիկ. Արշալույս Այվազյանը, տիկ. Մաքրիհե Շեքերճյանը, տեր և տիկ. Աբրահամ Եսայանները և օր. Մայտա Իհմալյանը, որը ներկայացնում էր պատվո ատենապետուհի տիկ. Հրանույշ Իհմալյանին:

Ճաշկերույթին մասնակցում էին շուրջ 200 հրավիրյալներ, որոնց բաշխվեցին մեկական հայկական խաչքար-հուշանվերներ՝ տեր և տիկ. Թորոսյանների կողմից:

Սրահում ցուցադրված էին վարչության տիկնանց ձեռքով իսկ պատրաստված՝ Էջմիածին ուղարկվելիք պատարագի զգեստների նմուշները:

Ճաշկերույթը սկսվում է վարչության ատենադպրուհի տիկ. Ռոզին Պապայանի գեղեցիկ խոսքով, որը հրավիրյալներին ներկայացնում է միության միամյա գործունեության ընդհանուր պատկերը:

Այնուհետև տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը կարդում է Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական հետևյալ հեռագիրը՝ տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանի անունով, որն ունկնդրվեց հոտնկայս.

«Մեծ սիրով և գնահատանքով կողջունենք կրոնասեր տիկնանց համախմբումը և տասնհինգ տարիներու նվիրյալ գործունեությունը ի պայծառություն ամենայն հայոց սուրբ Էջմիածնի: Մայր Աթոռը երախտապարտ է կրոնասեր տիկնանց վարչության հավատավոր անդամներուն և բոլոր գործակիցներուն և նվիրատուներուն: Աստված անսասան պահպանե մեր սուրբ եկեղեցին և հավետ պայծառ սուրբ Էջմիածինը: Ձեր կազմակերպության հոբելինական հանդիսության առթիվ կհղեմք Մեր ողջույնը և օրհնությունը կրոնասեր ազնվասիրտ տիկնանց, տեր և տիկ. Թորոսյաններուն և ձեզի սիրելի հայր սուրբ ձեր եռաջան աշխատանքին համար: Ողջ լերուք զորացյալ սուրբ Հոգվով և հավետ օրհնյալ ի Տյառնե և ի Մենք»:

Ընդունելության ժամանակ բաժակներ բարձրացան Հայոց Հայրապետի կենաց առողջության և Մայր Աթոռի պայծառության համար:

Օրվա գլխավոր բանախոսն էր Վ. Թեքեյան վարժարանի տնօրեն պրն. Երվանդ Պապայանը, որը կուռ և իմաստալից ճառով վեր հանեց սույն կազմակերպության օրինակելի և եկեղեցանվեր գործունեությունը՝ բարօրություն մաղթելով հյուրընկալ Լիբանանին և բարգավաճում՝ նրա ժողովրդին:

Տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանն իր խոսքի մեջ շեշտեց հավատքի տարածման կարեւորությունը և մեր հավատքի վեմ ս. Էջմիածնի պայծառացման անհրաժեշտությունը:

Այնուհետև եղան սրտաբուխ նվիրատվություններ:

Գործադրվեց գեղեցիկ ու կոկիկ գեղարվեստական մի հայտագիր: Մեջ ընդ մեջ երգեց տիկ. Մարիժան Գասարճյանը՝ ընկերակցությամբ դաշնակահար պրն. Ռաֆի Թորոսյանի: Յուրահատուկ պերճախոսությամբ ներկաներին զվարճացրեց պրն. Գրիգոր Տեյիրմենճյանը:

Բոլոր ներկաները ճաշկերույթից մեկնեցին բարձր տրամադրությամբ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է կրոնասեր տիկնանց համախմբումը՝ նրա գործունեության 15-ամյակի ուրախ առիթով, և բարեմաղթում նորանոր հաջողություններ նրա եկեղեցանվեր և ազգօգուտ գործունեության ճանապարհի վրա՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի հովանու և Հայոց Հայրապետի օրհնության ներքո:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵԹՈՎՊԱՀԱՑ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Եգիպտահայոց առաջնորդական տեղապահ տ. Զավեն եպս. Չինչինյանը վերջերս իր պաշտոնական գրությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին տեղեկացնում է եթովպահայոց գաղութային ժողովի 1972 թ. նոյեմբերին տեղի ունեցած վերընտրությունների արդյունքի մասին՝ ներկայացնելով ընտրված դիվանի կազմը հետևյալ կերպով.

Նախագահ՝

հոգևոր հովիվ արժ. տ. Թորգոմ քհն. Կյովողլանյան,

Տիար Էլիաս Ճեռահյան՝ ատենապետ,

Տիար Պետրոս Սվաճյան՝ փոխ-ատենապետ,

Տիար Ժորժ Իսրայելյան՝ ատենադպիր,

Տիար Մուշեղ Երևանյան՝ գանձապահ,

Տիար Ավետիս Թերզյան՝ խորհրդական,

Տիար Արշավիր Թերզյան՝ խորհրդական,

Տիար Պերճ Կարապետյան՝ խորհրդական:

Վեհափառ Հայրապետը եթովպահայ գաղութային վարչությանն ուղղած Իր 28 ապրիլ 1973 թվակիր գրությամբ ողջունում է գաղութային ժողովի ընտրությունները՝ մաղթելով հաջողություններ նրանց ազգաշեն, եկեղեցանվեր գործունեության ճանապարհի վրա:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն Իր պաշտոնական գրության մեջ շեշտում է.

«Եթովպահայ համայնքը թեև իր համրանքով ոչ մեծ, սակայն որակով և խաղաղ ու արդյունավետ իր հոգևոր, կրթական և մշակութային գործունեությամբ երկար տարիներե ի վեր կհանդիսանա օրինակելի կրոնական համայնք մը սփյուռքի տարածքի վրա: Այս իրողությունը նաև Մենք անձամբ հաստատեցինք 1965 թվականի Մեր այցելության առիթով ձեր քրիստոսասեր երկիրը, երբ պատիվը ունեցանք հյուրը ըլլալու օգոստափայլ Հայլե Սելասիե կայսեր, Վեհափառ ղեկավարը ձեր երկրին և մեծ բարեկամը հայ ժողովուրդին:

Գնահատելով ձեր նորընտիր վարչության անդամներու ծառայասեր և հավատարիմ ոգին և վստահ ըլլալով թե ձեր ապագա աշխատանքներու ընթացքին առավել պիտի ամրապնդվի ձեր գաղութի եկեղեցական և կրթական կյանքը, և առավել պիտի ջերմանան ձեր հոգիները Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնությամբ, Մենք, այսու Մեր գրով, կողջունենք և կշնորհավորենք ձեր ընտրությունը, մաղթելով որ Աստված միշտ շեն ու պայծառ պահպանե ձեր եկեղեցին, ձեր կրթական, բարեսիրական, ազգային հաստատությունները և միշտ անփորձ ու անվտանգ մնան համայն եթովպահայ Մեր հավատացյալ զավակները:

Մենք երջանիկ պիտի ըլլանք բարի լուրեր ստանալով Զեզմե և գերաշնորհ տ. Զավեն եպս. Չինչինյանեն, որ իբրև Մեր ներկայացուցիչը կոչված է իր հոգևոր առաջնորդության ներքև պահպանելու ձեր եկեղեցին և ձեր կրոնական համայնքը՝ սուրբ Հոգվո օգնությամբ»:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ողջունում է եթովպահայ գաղութային վարչության ժողովականներին և մաղթում նրանց հետագա գործունեության հաջողություն: